28.11.2024թ. <Յունիբանկ> ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ տեղեկատվություն	**Информация по вопросам повестки дня внеочередного общего собрания акционеров ОАО “Юнибанк” 28.11.2024г.**
Հարց 1. <Յունիբանկ> ԲԲԸ սովորական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման տեղաբաշխման ձևը սահմանելու մասին: Բանկի զարգացման ռազմավարության շրջանակներում առաջադրված խնդիրների իրագործման նպատակով և հաշվի առնելով <Յունիբանկ> ԲԲԸ արժեթղթերի նկատմամբ պահանջարկը, Բանկի Խորհուրդը որոշում է կայացրել իրականացնել թվով 10.000.000 հատ սովորական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում՝ յուրաքանչյուրը 100 ՀՀ դրամ անվանական արժեքով, 390 ՀՀ դրամ շուկայական արժեքով: Տեղաբաշխումն առաջարկվում է իրականացնել բաց բաժանորդագրության միջոցով: Բաժնետոմսերի տեղաբաշխման ձևը սահմանվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ:	**Вопрос 1.** Об установлении формы размещения дополнительного выпуска обыкновенных акций ОАО “Юнибанк”. Для реализации поставленных задач в рамках стратегии развития Банка и учитывая спрос на ценные бумаги ОАО “Юнибанк”, Советом Банка принято решение осуществить дополнительный выпуск обыкновенных акций в количестве 10.000.000 штук номинальной стоимостью каждой акции 100 драм РА и рыночной ценой 390 драм РА. Размещение предлагается осуществить путем открытой подписки. Форма размещения акций устанавливается общим собранием акционеров.
Հարց 2. <Յունիբանկ> ԲԲԸ կանոնադրությունում փոփոխությունները հաստատելու մասին: Բանկի կորպորատիվ կառավարման համակարգի օպտիմալացման նպատակով առաջարկվում է կատարել փոփոխություններ և լրացումներ Բանկի կանոնադրությունում, որոնք վերաբերում են որոշ հոդվածների վերաշարադրմանը գործող օրենսդրական ակտերին համապատասխան, որոշ իրավասություններ Վարչությանը պատվիրակելու Խորհրդին լիազորելուն, պարտատոմսերի թողարկման սահմանափակումների վերացմանը, համապատասխանության ապահովման և ռիսկերի կառավարման ստորաբաժանումների հիշատակմանը և վերջիններիս գործառույթների նկարագրմանը, ինչպես նաև բաժնետերերի ընդհանուր ժողովին ձայների հաշվարկը և քվեարկության արդյունքների ամփոփումը Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի միջոցով էլեկտրոնային եղանակով կազմակերպելուն, տեխնիկական բնույթի փոփոխությունների կատարմանը /կանոնադրությունում փոփոխությունների նախագիծը կցվում է/:	**Вопрос 2.** Об утверждении изменений в уставе ОАО “Юнибанк”. В целях оптимизации системы корпоративного управления Банка предлагается внести изменения и дополнения в устав Банка, касающиеся переизложения некоторых статей в соответствии с действующими законодательными актами; наделения Совета полномочием делегировать Правлению определенные компетенции; устранения ограничения на выпуск облигаций; упоминания о подразделениях по обеспечению соответствия и управлению рисками и описания их функционала; а также осуществления подсчета голосов на общем собрании акционеров и подведения итогов голосования электронным путем посредством Центрального депозитария Армении, внесения правок технического характера /проект изменений в устав прилагается/.

Հարց 3. <<Յունիբանկ> ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ> ներքին իրավական ակտում փոփոխությունները հաստատելու մասին: Առաջարկվում է կատարել հետևյալ փոփոխությունները՝ – ավելացնել 7-րդ գլխում 7.8 - 7.11 կետերը, որոնք սահմանում են Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման մասին Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի ծանուցման և նրանց մասնակցության կարգը. 7.8. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ներկա գտնվել Ժողովին՝ առանց քվեարկությանը մասնակցելու: 7.9. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը Ժողովի գումարման մասին ծանուցվում են սույն Կարգի 7.2 կետին համապատասխան: 7.10. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերին տրամադրվող նյութերի ցանկը չի ընդգրկում քվեաթերթիկ, բացառությամբ այն դեպքերի, եթե Ժողովին նախատեսվում է քննարկել և քվեարկության դնել Բանկի կանոնադրության 5.5 կետով սահմանված հարցեր, այն են՝ – Բանկի վերակազմակերպման հարցեր, – Բանկի լուծարման հարցեր, – Բանկի Կանոնադրության մեջ այնպիսի փոփոխություններ կատարելու մասին հարցեր, որի հետևանքով սահմանափակվում են արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները: 7.11. Կանոնադրության 5.5 կետով սահմանված հարցերի վերաբերյալ ժողովում քվեարկելու դեպքում Բանկի մեկ արտոնյալ բաժնետոմսը դրա սեփականատիրոջը տալիս է մեկ ձայնի իրավունք: – 7.1 կետից հանել ժողովի գումարման մասին ծանուցումը առնվազն 1.000 տպաքանակ ունեցող օրաթերթում հրապարակելու մասին պահանջը, ավելացնել Բանկի պաշտոնական կայքէջում և azdarar.am հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում այն հրապարակելու մասին պահանջը: – Կարգի 2.1 և 6.1 կետերի շարադրանքը համապատասխանեցնել կանոնադրության համապատասխանաբար 10.1.1 և 10.10 կետերի շարադրանքին: – Կատարել տեխնիկական բնույթի ուղղումներ:	**Вопрос 3.** Об утверждении изменений во внутреннем правовом акте “Порядок подготовки и проведения общего собрания участников ОАО “Юнибанк””. Предлагается внести следующие изменения: – добавить в главу 7 пункты 7.8 – 7.11, устанавливающие порядок уведомления владельцев привилегированных акций Банка о созыве общего собрания акционеров Банка и их участия на нем: 7.8. Владельцы привилегированных акций имеют право присутствовать на собрании без участия в голосовании. 7.9. Уведомление владельцев привилегированных акций о созыве собрания осуществляется в соответствии с пунктом 7.2 настоящего Порядка. 7.10. Перечень материалов, предоставляемых владельцам привилегированных акций, не включает бюллетеня для голосования, за исключением случаев, если на собрании предусматривается обсудить и поставить на голосование вопросы, установленные пунктом 5.5 устава Банка: – вопросы реорганизации Банка, – вопросы ликвидации Банка, – вопросы о внесении таких изменений в Устав Банка, в результате которых ограничиваются права владельцев привилегированных акций. 7.11. При голосовании на собрании по вопросам, установленным пунктом 5.5 устава, одна привилегированная акция Банка дает ее владельцу право на один голос. – В пункте 7.1 отменить требование о публикации объявления о созыве общего собрания в газете с тиражом не менее 1.000 экземпляров, добавить требование о его размещении на официальном сайте публичных уведомлений azdarar.am. – Изложение пунктов 2.1 и 6.1 Порядка привести в соответствие с изложением пунктов 10.1.1 и 10.10 устава, соответственно. – Внести правки технического характера.